

ԿԱՐՈՒՅ ԳԱԳԻԳ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԸ

1910 թ. Ապրիլի Սրարատի մէջ (էջ 32—41) հրատարակեցի Գաղիզ թագաւորի նշանաւոր ձեռագիր Աւետարանի նկարագրութիւնը: Երուսաղէմի մատենադարանի զարդ կազմող այդ ձեռագիրը բարձրագոյն արւեստէն է. նրա բազմաթիւ նկարները կարելի հանել են, թէ ամբողջ թերթերով և թէ թերթամասերով: Մատենադարանի ուսումնասիրութիւնը մեզ առիթ էր առնել ենթադրելու, որ այդ շարագործութիւնը կատարուել է հէնց այդ վանքում, ոգէտ և անմիտ մի վանականի ձեռքով, որովհետեւ մեզ յաջողուեց այդ ձեռագրի մի քանի թերթերը դնել երկու ուրիշ ձեռագրում, իբրեւ մագաղաթեայ պահպանակ գործածուած:

Այժմ Տէր Մեսրոպ վարդապետ Նշանեանից ստացայ մի կարեւոր նամակ (գրուած մայիս ամսուայ 13-ին), ներփակեալ երկու լուսանկար թերթեր, որ ներկայացնում են մի արքայական ընտանիքի մանրանկարը և նկարի հակառակ երեսում համարատառան մի յիշատակարան: Այդ նշանաւոր թերթն էլ անկասկած հանուած է Գաղիզի ձեռագրից և ծառայել է իբրեւ մագաղաթեայ պահպանակ մի անկարեւոր ձեռագրի կազմի և Մեսրոպ վարդապետը ի լոյս է հանել քրքրելով վանքի տպարանի մի անկիւնում ընկած մի հին սնտուկ:

Հայր Մեսրոպ գրում է.

«Նոր surprise-ով մը կուգամ գոհացնել Ձեր բանասիրական ճաշակը: Մի քանի օր առաջ բացուեցաւ մեր Տպարանի խոնար մէկ անկիւնը նետուած փայտէ փտած սնտուկ մը, որում մէջէն գտնուեցաւ շատ մը հին կոնդակներու (խոնարութենէ փճացած) և մագաղաթեայ դանադան կարգի պահպանակներու հետ. նաեւ արքայական խմբանկար մը պարունակող մի մագ. պահպանակ, որու նկարագրութիւնը առանձին թուղթով կը ներփակեմ: Նկարը շատ հետաքրքիր է և նորա ընդհանուր ընթերցումը, ինչպէս և յիշատակարանի միջին մեսրոպեան երկաթագիր տառերը ինձ կարծել կուտան թէ Նիլիկեան շրջանէն առաջ Բագրատունի արքայական ընտանիքի մը կը պատկանի: Ափսոս որ նկարի վերի մասը և յիշատակարանի մէկ մասը կտրուած է. դու ցէ մասնագէտի աչքով դիտող մը կարողանայ աւելի լոյս սփռել: Եթէ հնարաւորութիւն ունենամ, պատկերը և յիշատակարանը նկարել տալով կուղարկեմ Ձեզ: Եթէ կը յիշէք, մեր ձեռ. մատենադարանի կարգ մը գիրքերը ասկէ

մօտ 20 տարի առաջ Սահակ Եպիսկոպոս կազմել տուած էր այն ատեն այդ դրքերու պահպանակները ջոկել տալով իւրեանսլէտ բաներ նետել տուեր է տպարանի խոնաւ մի անկիւնը: Թուղթերը բոլորովին փծացեր են, իսկ մագաղաթները բաւականին խաթարուեր են: Ատոնց մէջ կը գտնուի եղեր յիշեալ նշանաւոր պահպանակը, որուն կարեւորութիւնը չէ կարողացեր ըմբռնել Խաչայեան Եպիսկոպոսը:»

Այս ընդհանուր տեղեկութեանը հ. Մեսրոպը կցում է դատած նկարի նկարագրութիւնը:

Մագաղաթեայ պահպանակ (նոր գտնուած երուսաղէմում)

Մէկ երեսը կը ներկայացնէ Թագաւորական ընտանիքի մը նկարը, միւս երեսը՝ յիշատակարանի մասեր:

Մեծութիւն մագաղաթեայ թերթին՝ $20,5 \times 28,5$.

Մեծութիւն պատկերին՝ 18×26 .

Հանգամանք՝ վերի մասէն կտրուած և խոնաւութենէ բաւական եղծուած:

Պատկերը կը ներկայացնէ աջ կողմը Թագաւորը, ձախը՝ Թագուհին, երկուսին ճիշտ մէջտեղը աղջիկ մը, հաւանաւանաբար իրենց դուստրը, կարմրագոյն զարդանկար բազմոցի (թախտ) մը վրայ երեքը նստած ծալապատիկ մէկ շարքի վրայ:

Բազմոցի եղերքէն մինչև գետինը կախուած լաթին ճաւառը կը ըջջանակներու մէջ նկարուած են փիղեր, տերևներ և ուրիշ զարդեր: Բազմոցին երկու կողմերը, Թագաւորին աջ և Թագուհուն ձախ կողմը իրարու վրայ դրուած են երկուսական բարձեր, թախտին երկու կողմերը՝ գետնին վրայ կան երկու պտղամաններ՝ նման այժմու պտղամաններու, որոց վրայ դարսուած են հաւասար մեծութեամբ զանազան գոյնի պտուղներ նման խնձորի և տանձի: Թագաւորին կողմի պլատզամանը մեծ է, Թագուհուն կողմինը փոքր: Սենեկին պատը կամ պատկերին ֆօնը ամբողջ ոսկեղօծ է:

Թագաւորին գլուխը վերի մասէն կտրուած է մինչև քթին վարի ծայրը: Որոշ կերեկին սև ու խիտ կարճ խուղած միւրուքը, բերանը և պէխը: Չեռքերը բաց են աղօթելու ձևով: Հագին ունի երկար շուրջառած և զգեստ կամ պատմուճան՝ կարմիր, կապոյտ և մանիշակի գոյներով զարդանկարուած: Նրկու ուսերուն վրայ՝ գէպի կուրծքը երկար քառակուսի երկու սպիտակ զարդեր. քառակուսիներուն մէջ ոսկեղօծ զարդանկարուած: Պատմուճանին կուրծքին և փորին վրայ զարդարուն կտոր ըջջանակներու մէջ նկարուած են երկու կենդանիներ,

որոնք գառնուկի կը նմանին, թէպէտ միոյն առջևի ոտքերը կը նմանի առիւծի թաթերու:

Թագուհուն դէմքը կտրուած է քիթի վերի արմատէն վեր: Քիթը, բերանը, այտերն ու կզակը շատ որոշ են ու նրբանկար: Վիզը կը շրջապատեն երկու կարգ մարդարտաշար բարակ մանեակներ: Աջ ձեռքում բռնած ունի մի բան, զոր չկարողացայ ինչ լինելը իմանալ: Չախ ձեռքը բացած ու կուրծքին վրայ դրած է: Հազին ունի երկար պարեգօտ մը կարմիր կանաչ դարդերով: Գլխէն վար մինչև թախթին վրայ ձգուած է սպիտակ պատմուճան մը, վրան սրտի կամ նշաձև նմանութեամբ կարմիր և սևեղօժ գոյնի դարդերով: Պատմուճանի վարի եզերքը դարդարուն կարմիր, կապոյտ և սևեղօժ գոյներով: Չգեսաի ձեռ ամբողջութեամբ կը նմանի Աստուածածնայ պատկերներու մէջ նկարուածին:

Մէջտեղը նստած համեմատաբար փոշրահասակ աղջկան դէմքը անաղարտ մնացած է. կտրուած է միայն գագաթը՝ յօնքերէն վեր: Թագուհուն նման վզին վրայ ունի երկու կարգ մանեակներ մարդարտաշար: Ձեռքերը բաց է՝ ափերը դէպի գուրս և կուրծքին վերայ սեղմած: Հազին ունի կարմիր, կապոյտ ու սև գոյներով պարեգօտ: Գլխէն վար ձգուած կապոյտ պատմուճանը կերկարի ուսերէն վար մինչև արմուկները: Ուսերուն վրայ թագաւորի պատմուճանին նման քառակուսի երկու դարդեր:


Միւս երեսի յիշատակարանը.

Երկսիւն գրուած, մնացած են, վարէն հաշուելով, եօթական տող: Ութերորդ տողերը կեսէն կտրուած լինելով անընթեռնելի են:

Մեծութիւն գրութեան իւրաքանչիւր սիւնակի. — $9,5 \times 9$
Տեսակ տառերու. — Միջին մեարդական երկաթագիր:¹

1. Ծն. Գրերը միջին Մեարդական չեն, այլ գեղեցիկ երկաթագիր:

Գաղիցի Աւ. մէջ, աւետարանների վերջում գտնուած յիշատակարանները գրուած են շատ խոշոր երկաթագրով, այս յիշ.ի գրութիւնը նման է բնագրի գրերին:



Ա. ՍԻՆԱԿ.

յոր բնակէ հողին սո
ւրս ի գեղեցիկ վարս
սորա եւ լցեալ հոյս
ով Էրկեղիւ տն ա

Բ. ՍԻՆԱԿ.

ըն թագոհոյն եւ
վասն մարեմայ նո
ցուն զարմին զի շն
որհնեցէ զնոսա ա՛օ

նարստ վարիւք վար	եկեղեցւոյ իւրոյ ընդ
ժեալ քննէր զամեն	երկայն աւուրս խա
նայն տառս հոգէզա	զաղական ամենաւր առ

Այս նկարագրութիւնն ու յիշատակարանը կարգաւորվ իսկոյն մտաբերեցի Գաղիգ թագաւորի Աւետարանը. որը իւր աւերուած վիճակում ունի մի կարեւոր յիշատակարան նորագիւտի հետ համեմատելու համար:

Ղուկասի աւետարանի վերջում խոշոր երկաթագիր տառերով գրուած է.

«Զստացող	արասայ եւ զ
արքայ աւետա	գորանդուխտ
րանիս զգա	թագոհի եւ զմ
զիզ շահան...	արեմ յիշես... (թերի):

Նորագիւտ թերի յիշատակարանում եւ յիշատակում են գրքի ստացող հոգւոյն որքայ բնականան, ինչ Ա.Յ. երկիւղով անարատ վարքով վարժուած և սուրբ գրքերի ընթերցանութեան ներկուռ այրն «սբ թագոհոյն» և նոցա դուստր Մարիամը:

Նս իմ ձեռի տակ ունիմ Գաղիգի ձեռագրի երկու էջերի լուսանկարը, որի դրութիւնը բաղդատելով յիշատակարանի գրութեան հետ, և ի նկատի ունենալով նաեւ թերթի մեծութեան չափերը, աներկբայ համոզուում եմ, որ նորագիւտ մանրանկարը ներկայացնում է Կարսի Գաղիգ թագաւորին, նորահնոջ Կարանդուխտին և դստեր Մարեմին: Աւշագրութիւնից չափաի վրեպի նաեւ «թագոհի» և «թագոհոյն» և «Մարեմ» ձևերը:

Ղուսանկարը, ինչպէս երևում է կցուած արտատպութիւնից, շատ աղօտ է և դժուար է նրա վրայ ճշտ նկարագրութիւն կատարել: Անմիջապէս դրել եմ Մենքոպ վարդապետին, որ նա, եթէ հնար է, պատրաստել տայ գունաւոր արտահանութիւնը և ինձ ուղարկի, որից յետոյ կկատարեմ մանրամասն ուսումնասիրութիւն:

Նրուսողէմի ձեռագրատան մէջ մենք ունէինք Պուրինիան Վեոն Գ-ի և սորա ամուսինն Կեռան թագոհու երկու նկարը, մէկի մէջ շրջապատուած իրենց հինգ զաւակներով. Վեոնի հօրեղբայր Վասակ իշխանի և երկու որդիների նկարը և Մարիուն թագոհու նկարը (այդ մասին տես «Հանդէս Սմսօրեայի» վերջի համարի իմ յօդուածը): Սոցա վրայ աւելանում է Գաղիգ թագաւորի ընտանեկան խմբանկարը:

